ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻԶՄԻ[1] ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՌԵԼՅԱՏԻՎԻԶՄԻ[2] ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼԱՈՒՐԱ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

DOI: 10.63925/18294847-2026.blj22-02

Ամփոփագիր. Սույն հոդվածում վերլուծվում է, որ միջազգային իրավունքի ժամանակակից դոկտրինայում[3] մարդու իրավունքների էվոլյուցիան, սկսած 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ) ընդունումից, անխզելիորեն կապված է մի լրջագույն հիմնախնդրի հետ. արդյո՞ք այդ իրավունքներն ունեն համընդհանուր (ունիվերսալ) կիրառելիություն, թե՞ դրանց բովանդակությունը պետք է համապատասխանեցվի տեղական մշակութային համատեքստին: Հեղինակն ընդգծում է, որ չնայած Մարդու իրավունքների միջազգային բիլլին[4] ստեղծել է պարտադիր նորմերի համընդհանուր համակարգ, տարբեր մշակութային, կրոնական և տնտեսական

---

[1] Ունիվերսալիզմ**,** աստվածաբանական ու փիլիսոփայական հասկացություն, որտեղ որոշ գաղափարներ ունեն համընդհանուր կիրառություն ու կիրառելիություն: Հասկացության բացատրությունը սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով https://shorturl.at/xXVGe: Իրավական ունիվերսալիզմը հայեցակարգ է, ըստ որի՝ մարդու հիմնարար իրավունքները բնական են, բացարձակ և հավասարապես կիրառելի բոլոր մարդկանց նկատմամբ ողջ աշխարհում՝ անկախ նրանց ազգային, կրոնական կամ մշակութային պատկանելությունից:

[2] Մշակութային ռելյատիվիզմն այն մոտեցումն է՝ ըստ որի գաղափարներն ու բարոյական արժեքները պետք է ընկալվեն իրենց սեփական մշակութային համատեքստում և չպետք է դիտարկվեն այլ մշակույթի չափանիշներով: Այն հաստատում է բոլոր տեսակետների հավասար հիմնավորվածությունը և ճշմարտության հարաբերական բնույթը, որը սահմանված է անհատի կամ իր մշակույթի կողմից: Հասկացության բացատրությունը սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով https://surl.li/fkunbm:

[3] **Դոկտրին** կամ **դոկտրինա** (լատ. doctrina՝ ուսմունք, սովորեցում, docere՝ սովորեցնել), մի շարք սկզբունքների, համոզմունքների, ուսմունքների կամ տեսական համակարգերի ամբողջություն է:

[4] **Մարդու իրավունքների միջազգային բիլլը** (անգլ.՝ *International Bill of Human Rights*) միջազգային իրավական փաստաթղթերի համակարգի ոչ պաշտոնական անվանումն է, որը հիմք է հանդիսանում ժամանակակից միջազգային մարդու իրավունքների պաշտպանության ողջ համակարգի համար: Այն բաղկացած է ՄԱԿ-ի կողմից ընդունված հետևյալ հիմնարար երեք փաստաթղթերից. 1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ՄԻՀՀ), 2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՔՔԻՄԴ), 3. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՏՍՄԻՄԴ): Տեղեկատվությունը սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով https://surl.li/yssnsg:

ավանդույթներ ունեցող պետությունները պատմականորեն ցուցաբերել են և շարունակում են ցուցաբերել դիմադրություն դրանց անփոփոխ կիրառմանը:

Աշխատանքի նպատակն է վերլուծել ունիվերսալիզմի և ռելյատիվիզմի դոկտրինալ բախումը ժամանակակից գլոբալ իրավահամակարգում և առաջարկել «Հարաբերականության Շերտայնության Մոդելը»՝ որպես արդի հիմնախնդրի իրավական հաղթահարման գործիքակազմ:

Բանալի բառեր. Բնական իրավունքի դոկտրին, մշակութային ռելյատիվիզմ, դոկտրինալ սինթեզ, իրավակիրառ պրակտիկա, հռչակագիր, Միջազգային Բիլլ, կոնցեպտուալ շրջանակ, առաջնահերթության թեզ, նախադեպային ուսումնասիրություն:

Ներածություն. Միջազգային իրավական դոկտրինայում մարդու իրավունքների համընդհանուր բնույթի և մշակութային առանձնահատկությունների բախումը շարունակում է մնալ գլոբալ իրավահամակարգի ամենասուր հիմնախնդիրներից մեկը: Այս հակամարտությունը հաճախ հանգեցնում է նրան, որ տարբեր վարչակարգեր տեղական սովորույթներն ու կրոնական դոգմաներն օգտագործում են որպես վահան՝ հիմնարար ազատությունների կոպիտ խախտումները քողարկելու համար: Արդյունքում՝ միջազգային հանրությունը պարբերաբար բախվում է իրավական երկակի ստանդարտների և համակարգային ճգնաժամի հետ: Հետևաբար, արդիական անհրաժեշտություն է դառնում այնպիսի նոր տեսական մոտեցումների կիրառումը, որոնք հստակ կսահմանազատեն համընդհանուր պարտադիր նորմերն ու մշակութային ճկունության սահմանները:

Հետազոտություն.

1. Ունիվերսալիզմի դոկտրինալ առանցքը. Բնական իրավունքի ժառանգություն և անբաժանելիություն

Համընդհանրության (Universality) հայեցակարգը հիմնվում է այն աքսիոմատիկ[5] գաղափարի վրա, որ մարդու իրավունքները բխում են բնածին մարդկային արժանապատվությունից (Inherent Dignity): Ըստ այդմ՝ իրավունքները գոյություն ունեն

[5] Աքսիոմատիկ (հունարեն՝ *axiōma*—արժանահավատ, անվիճելի դրույթ) նշանակում է՝ Հիմնված աքսիոմների (ելակետային դրույթների, ենթադրությունների կամ սկզբունքների) վրա, որոնք ընդունվում են առանց ապացույցի, քանի որ ակնհայտ են կամ ծառայում են որպես հենք տեսության կառուցման համար:

մշակույթներից, ավանդույթներից կամ պոզիտիվ օրենքներից անկախ. դրանք բացարձակ են և կիրառելի բոլորի համար:

Միջազգային իրավունքի տեսանկյունից համընդհանրությունը հիմնված է բնական իրավունքի ժառանգության վրա: Անհատն իրավունքներն ստանում է ոչ թե պետության կողմից շնորհման կամ մշակութային պատկանելության արդյունքում, այլ պարզապես մարդ լինելու կենսաբանական և բարոյական փաստի ուժով: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն (ՄԻՀՀ)[6] իր նախաբանում և 1-ին հոդվածում հստակ ամրագրում է այս թեզը՝ նշելով, որ բոլոր մարդիկ ունեն «բնածին արժանապատվություն և հավասար ու անօտարելի իրավունքներ»: Հետևաբար, իրավունքների էությունը չի կարող դառնալ տեղական սովորույթների շուրջ քաղաքական «բանակցությունների» առարկա:

Մարդու իրավունքների միջազգային բիլլի[7] (ՄԻՀՀ, ՔՔԻՄԴ, ՏՍՄԻՄԴ) ընդունմամբ ունիվերսալիզմն ստացավ պարտադիր իրավաբանական ուժ: Պայմանագրերը վավերացրած պետությունները պարտավոր են ապահովել դրանցում ամրագրված իրավունքները՝ առանց որևէ խտրականության կամ մշակութային վերապահումների՝ բացառությամբ բուն դաշնագրերով ուղղակիորեն թույլատրվածների:

Ավելին, իրավական դոկտրինայում համընդհանրությունը սերտորեն կապված է իրավունքների անբաժանելիության սկզբունքի հետ, որը միավորում է մարդու իրավունքների բոլոր երեք սերունդները.

- I Սերունդ: Քաղաքացիական և քաղաքական ազատություններ,
- II Սերունդ: Տնտեսական, սոցիալական և մշակութային երաշխիքներ,
- III Սերունդ: Կոլեկտիվ և համերաշխության իրավունքներ:

Այս սերունդները փոխկապված են. մեկ սերնդի իրավունքները մյուսին հակադրելը կամ մեկը մյուսի հաշվին զոհաբերելը հակասում է համակարգային իրավաբանությանը: Համընդհանրության դիրքորոշումն աներկբա է. մարդու իրավունքները չեն կարող չեղարկվել կամ նվազեցվել ազգային նորմերով:

---

[6] Տեղեկատվությունը սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով https://surl.li/cxvcwm :

[7] ՄԱԿ-ի պաշտոնական բացատրություն, սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://surl.li/kmtbgb:

2. Մշակութային ռելյատիվիզմի մարտահրավերը և դրա աղբյուրները

Մշակութային հարաբերականությունը (*Cultural Relativism*) պնդում է, որ մարդու իրավունքների իմաստը, առաջնահերթությունը և իրացման մեթոդները պետք է պայմանավորված լինեն տվյալ հասարակության պատմամշակութային և կրոնական համատեքստով: Այս ուղղության կողմնակիցները (հատկապես ոչ-արևմտյան իրավական համակարգերի ներկայացուցիչները) առաջադրում են չորս հիմնական ռադիկալ փաստարկ.

1. **Արևմտյան ծագման թեզ (Մշակութային իմպերիալիզմ)**- կա տեսակետ, որ Միջազգային Բիլլի հիմքում ընկած են բացառապես Եվրոպական Լուսավորության դարաշրջանի[8] անհատակենտրոն գաղափարները: Անհատի իրավունքների բացարձակ գերակայության պարտադրումը ողջ աշխարհին դիտարկվում է որպես արևմտյան «իրավական իմպերիալիզմ»:
2. **Արժեքային տարբերություններ և համայնքային գերակայություն**- ասիական կամ աֆրիկյան ավանդական հասարակություններում առաջնային է համարվում Համայնքի, Ընտանիքի կամ Կլանի դերը: Այս համատեքստում անհատի շահն ստորադասվում է սոցիալական ներդաշնակությանն ու կայունությանը: Այս գաղափարախոսությունն իր իրավական կապիտալիզացիան ստացավ 1993 թ. Բանգկոկի Հռչակագրում[9], որտեղ

[8] Լուսավորչական դարաշրջան (Լուսավորություն), 17-րդ և 18-րդ դարերի եվրոպական մտավոր շարժում, որի ընթացքում Աստծուն, բանականությանը, բնությանն ու մարդկությանը վերաբերող գաղափարները միաձուլվեցին մի աշխարհայացքի մեջ, որն ստացավ Արևմուտքի լայն համընդհանուր հավանությունը և հեղափոխական տեղաշարժեր առաջացրեց արվեստում, փիլիսոփայության և քաղաքականության մեջ: Լուսավորական մտքի առանցքում բանականության օգտագործումն ու փառաբանումն էր՝ այն ուժը, որի միջոցով մարդիկ հասկանում են տիեզերքը և բարելավում սեփական վիճակը: Այդ ժամանակաշրջանի հայտնի մտածողներից են Ջոն Լոկը, Վոլտերը, Մոնտեսքյոն և Ժան-Ժակ Ռուսոն: «Բրիտանիկա» հանրագիտարանի (Encyclopædia Britannica) պաշտոնական կայքից, սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/lIBXI :

[9] Բանգկոկի հռչակագիրը (պաշտոնական անվանումը՝ Final Declaration of the Regional Meeting for Asia of the World Conference on Human Rights կամ ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթղթերում՝ Report of the Regional Meeting for Asia of the World Conference on Human Rights) 1993 թվականի ապրիլի 2-ին ընդունված տարածաշրջանային կարևորագույն փաստաթուղթ է: Այն ընդունվել է Ասիական տարածաշրջանի պետությունների նախարարների և ներկայացուցիչների կողմից՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում կայացած հանդիպման ժամանակ, որը նախապատրաստական փուլ էր մարդու իրավունքների 1993 թվականի Վիեննայի համաշխարհային կոնֆերանսի համար:

ասիական պետություններն ընդգծեցին տարածաշրջանային յուրահատկությունների և պատմական նախապատմության հաշվառման անհրաժեշտությունը:

3. **Կրոնական փաստարկներ (Իսլամական իրավակարգի մոդելը)**- իսլամական իրավունքի համատեքստում մարդու իրավունքների հայեցակարգը սահմանափակվում է աստվածային հայտնությամբ: Այս մոտեցման վառ դրսևորումն է 1990 թ. Կահիրեի Իսլամական Հռչակագիրը[10], որի համաձայն՝ մարդու բոլոր իրավունքներն ու ազատությունները ենթակա են իսլամական Շարիաթի սկզբունքներին, ինչն ուղղակի հակասության մեջ է մտնում ՄԻՀՀ-ի հետ՝ հատկապես դավանանքի ազատության և գենդերային հավասարության հարցերում:
4. **Տնտեսական առաջնահերթության թեզ**- Զարգացող երկրների դոկտրինալ պնդմամբ՝ II սերնդի իրավունքները (պարենային անվտանգություն, տնտեսական զարգացում) պետք է գերակայեն I սերնդի (քաղաքական ազատություններ) նկատմամբ, քանի որ քաղաքական ազատությունը զուրկ է իրավաբանական և կենսական բովանդակությունից սովի և ծայրահեղ աղքատության պայմաններում:

3. Ռելյատիվիզմի քննադատությունը և դրա քաղաքական շահարկումները

Միջազգային իրավունքի դոկտրինալ մեծամասնությունը խստորեն քննադատում է ռելյատիվիզմը՝ ցույց տալով, որ այն հաճախ ծառայում է որպես քաղաքական պատրվակ (*pretext*) իրավախախտումներն արդարացնելու համար: Հիմնական հակափաստարկները հանգում են հետևյալին.

- **Մարդկային արժանապատվության ժխտման անթույլատրելիություն.**

Այն սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է **ՄԱԿ-ի** պաշտոնական **Թվային գրադարանի** (UN Digital Library) հարթակում՝ https://shorturl.at/37Xcl , իսկ պաշտոնական թարգմանությունն անգլերենով հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/dtZ8i:

[10] Կահիրեի Իսլամական հռչակագիրը մարդու իրավունքների վերաբերյալ (ընդունված 1990 թ. և թարմացված 2020 թ. ԻՀԿ-ի կողմից) ստեղծվել է որպես Արևմտյան համընդհանուր չափանիշների այլընտրանք՝ մարդու իրավունքներն ու ազատությունները դիտարկելով բացառապես Իսլամական շարիաթի նորմերին ու սկզբունքներին համապատասխան:
Մինեսոտայի համալսարանի Մարդու իրավունքների գրադարան (1990 թ. բնօրինակ տարբերակն անգլերենով), սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/pQm3Z:

Որևէ մշակութային կամ կրոնական առանձնահատկություն չի կարող իրավաբանորեն արդարացնել այնպիսի արձանագրված խախտումներ, ինչպիսիք են խոշտանգումները, ստրկությունը, ապարտհեյդը[11] կամ կյանքի իրավունքի կամայական զրկումը:

- **Ավտորիտար էլիտաների պաշտպանություն.**

Մշակութային ռելյատիվիզմը հաճախ գործիք է իշխող քաղաքական էլիտաների ձեռքին՝ ներքին այլախոհությունը ճնշելու, մարդու իրավունքների պաշտպաններին լռեցնելու և սեփական իշխանությունը լեգիտիմացնելու համար՝ «ազգային յուրահատկության» քողի ներքո:

- **Գենդերային սիստեմատիկ խտրականություն.**

Ռելյատիվիզմի ամենացավոտ դրսևորումը կանանց իրավունքների ոլորտում է: Ավանդույթի ուժով փորձ է արվում արդարացնել կանանց հանդեպ խտրական պրակտիկաները (բռնի ամուսնություններ, կրթության սահմանափակումներ), ինչն ուղղակիորեն խարխլում է ՄԻՀՀ-ի հավասարության հիմնարար սկզբունքը:

4. Դոկտրինալ սինթեզ[12]. 1993 թ. Վիեննայի հռչակագրի ճգնաժամը և նոր իրավական գործիքակազմը.

1993 թվականի հունիսի 25-ի՝ Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովում ընդունված Վիեննայի հռչակագիրը[13] փորձեց հաշտեցնել այս երկու բևեռները:

---

[11] Ապարտեիդ (անգլ.՝ apartheid). մարդկության դեմ ուղղված հանցագործություն, ռասայական սեգրեգացիայի, խտրականության և ճնշման քաղաքականություն, որ ընդհուպ 20-րդ դարի 90-ականները Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարությունն իրականացնում էր բնիկ աֆրիկացիների և ոչ եվրոպացի այլ բնակչության նկատմամբ: Ապարտհեյդը բնորոշվում է որպես սպիտակամորթների՝ ավտորիտար քաղաքական մշակույթի վրա հիմնված գերիշխանություն, որը պետական մակարդակով խրախուսում էր հարավաֆրիկյան բանտու ժողովրդի և ոչ սպիտակամորթ այլ բնակչության նկատմամբ սանձազերծված հալածանքները:

[12] Դոկտրինալ սինթեզը (լատ. *doctrina* — ուսմունք և հուն. *synthesis* — միավորում, համադրություն) տարբեր տեսական հայացքների, իրավական կամ փիլիսոփայական դոկտրինների (ուսմունքների) միավորումն ու համադրումն է մեկ ամբողջական, համահունչ համակարգի մեջ:

[13] Վիեննայի հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը 1993 թվականին ընդունված պատմական միջազգային փաստաթուղթ է, որը վերահաստատել է մարդու իրավունքների համընդհանրության սկզբունքը և հիմք դրել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձր հանձնակատարի պաշտոնի ստեղծմանը:
Պաշտոնական հղումը (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ) սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով https://surl.li/tmqumy :

Հռչակագրի 5-րդ հոդվածը սահմանեց. *«Թեև ազգային և տարածաշրջանային առանձնահատկությունների, ինչպես նաև տարբեր պատմական, մշակութային և կրոնական հիմքերի նշանակությունը պետք է հաշվի առնվի, պետությունների պարտականությունն է՝ անկախ իրենց քաղաքական, տնտեսական և մշակութային համակարգերից՝ խրատել և պաշտպանել մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները»*:

Այս ձևակերպումն ստեղծեց տեսական պատնեշ՝ արգելելով մշակութային յուրահատկությունը վերածել իրավունքների նվազեցման պատրվակի, սակայն 21-րդ դարի աշխարհաքաղաքական իրականությունը ցույց է տալիս, որ Վիեննայի հռչակագիրը գործնականում մտել է խոր ճգնաժամի փուլ: Այսօր մշակութային ռելյատիվիզմը քաղաքականացվել է այն աստիճանի, որ ավտորիտար և տոտալիտար վարչակարգերի կողմից օգտագործվում է որպես գործիք՝ մարդու իրավունքների բոլոր երեք սերունդների ամբողջական հերքման, իրավական սուբյեկտայնության ոչնչացման և ներքին անպատժելիության մթնոլորտ ձևավորելու համար: ՄԱԿ-ի և միջազգային հանրության մեխանիզմները հաճախ ցուցաբերում են «արհեստական կուրություն»՝ քաղաքական շահերից կամ իրավական անզորությունից ելնելով:

Այս իրավաքաղաքական համատեքստն ամբողջացնելու և համընդհանուր պատկերն ավելի ակնառու դարձնելու համար ստորև ներկայացվում է միջազգային իրավունքի տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող որոշ պետությունների և տարածաշրջանների համեմատական աղյուսակը, որտեղ մշակութային, ազգային կամ կրոնական յուրահատկության պատրվակով գործում է իրավական երկակի ստանդարտը.

Սուբյեկտ/ Տարածաշրջան	**Իրավական ստատուսը ՄԱԿ-ում** Վավերացրել է հետևյալ Մարդու իրավունքների հիմնական պայմանագրերը.	**Փաստացի իրավախախտումները («Ավանդույթի» քող)**	**Միջազգային հանրության «Արհեստական կուրության» պատճառը**

Հայաստանի Հանրապետություն (առանձին համայնքներ /ազգային փոքրամասնություններ)	ՄԱԿ-ի լիիրավ անդամ պետություն, միջազգային կոնվենցիաների սուբյեկտ: • Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICESCR): Միացել է 1993 թվականի սեպտեմբերի 5-ին (որպես իրավահաջորդ՝ հիմքում ունենալով ԽՍՀՄ-ի կողմից ստանձնած պարտավորության: • Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICCPR): Միացել է 1993 թվականի հունիսի 23-ին (իրավահաջորդությամբ): • Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա: (CEDAW) Միացել է 1993 թվականի սեպտեմբերի 13-ին: • Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC): Վավերացվել է 1993 թվականի հունիսի 23-ին: ՀՀ-ն վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ:	-Երեխաների (այդ թվում՝ մանկահասակ և դեռահաս աղջիկների) վաղ կամ հարկադիր ամուսնությունների դեպքեր որոշ համայնքներում (օրինակ՝ եզդիական կամ որոշ գյուղական համայնքներում), որոնք հաճախ կատարվում են չգրանցված (կրոնական կամ սովորութային) ձևով՝ շրջանցելով ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված նվազագույն տարիքային շեմը: -Ընտանեկան բռնության համակարգային դրսևորումներ, կանանց նկատմամբ խտրականություն, հասարակության մեջ արմատացած պատրիարքական կարծրատիպեր («ընտանեկան գաղտնիք» կամ «ներքին հարց» լինելու պատրվակով), ինչպես նաև ատելության խոսքի և անհանդուրժողականության դրսևորումներ՝ հաճախ արդարացվող «ազգային-բարոյական ավանդույթների» պաշտպանությամբ:	«Ներքին հասարակական կամ համայնքային ինքնավարության» և «ազգային-կրոնական առանձնահատկությունների չմիջամտելու» սխալ ընկալումը պետական մարմինների կողմից. խնդիրը հաճախ բնութագրվում է որպես «համայնքի ներքին ավանդույթ», ինչը հանգեցնում է իրավապահների և սոցիալական ծառայությունների լռելյայն անգործությանը: Անվտանգային մշտական մարտահրավերների քողի տակ պետությունը համակարգային խնդիրների բարձրաձայնումը սխալմամբ որակում է որպես պետական դիմադրողականությունը թուլացնող գործոն: Արդյունքում՝ «ավանդական ընտանիքի» մասին պատրանքային պատկերացումները պահպանելու

			նպատակով գենդերային անհավասարությունն ու խոցելի խմբերի պաշտպանությունը միտումնավոր մղվում են երկրորդ պլան՝ զրկվելով անհետաձգելի իրավական լուծումներից:
Աֆղանստան	• Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր – վավերացվել է 1983 թ. հունվարի 24-ին: • Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր – վավերացվել է 1983 թ. հունվարի 24-ին: • Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա (CERD) – վավերացվել է 1983 թ. հուլիսի 6-ին: • Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW) – վավերացվել է 2003 թ. մարտի 5-ին: • Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա (CAT) – վավերացվել է 1987 թ. ապրիլի 1-ին: • Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC) – վավերացվել է 1994 թ. մարտի 28-ին: • Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն	Թալիբանի ռեժիմի կողմից գենդերային ապարտհեյդի սահմանում, կյանքի և առողջության պահպանման իրավունքների խախտումներ, աղջիկների կրթության, խոսքի ազատության, ազատ տեղաշարժի արգելք, մանկահասակների հարկադիր ամուսնություններ և այլն:	Թալիբանի դե ֆակտո իշխանության իրավական չճանաչումը ՄԱԿ-ի կողմից օգտագործվում է որպես պատրվակ՝ կոշտ հարկադրանքից խուսափելու համար:

	(OPCAT) – վավերացվել է 2018 թ. ապրիլի 17-ին:		
Եմեն	• Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICESCR) – վավերացվել է 1987 թ. փետրվարի 9-ին: • Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICCPR) – վավերացվել է 1987 թ. փետրվարի 9-ին: • Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա (CERD) – վավերացվել է 1972 թ. հոկտեմբերի 18-ին: • Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW) – վավերացվել է 1984 թ. մայիսի 30-ին: • Խոշտանգումների դեմ կոնվենցիա (CAT) – վավերացվել է 1991 թ. նոյեմբերի 5-ին: • Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC) – վավերացվել է 1991 թ. մայիսի 1-ին: • Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (CRPD) – վավերացվել է 2009 թ. մարտի 26-ին:	Ամուսնության նվազագույն տարիքի բացակայություն. 9-13 տարեկան երեխաների (առավել հաճախ աղջիկ երեխաների) զանգվածային հարկադիր ամուսնություններ:	Անվտանգության խորհրդի անդամների կողմից ճգնաժամին զուտ տարածաշրջանային հակամարտության (Իրան-Սաուդյան Արաբիա) պրիզմայով նայելը:
Սոմալի	• Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC) – վավերացվել է 2015 թ. հոկտեմբերի 1-ին: • Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին	Աղջիկ երեխաների 98%-ի ենթարկում սեռական թլպատման,/[14] «իգական սեռական թլպատում» տերմինը (անգլերեն՝ *Female Genital Mutilation*)/ (FGM),	«Ձախողված պետության» սինդրոմ. աշխարհի առաջնահերթությունը

[14] **ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (UNICEF)** – Պաշտոնական զեկույց, սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://surli.cc/ofregq:

	կոնվենցիա – վավերացվել է 1956 թ. հուլիսի 1-ին:	որը որակվում է որպես խոշտանգում: Ռելյատիվիստները պնդում են, որ սա «մշակութային ծես է»՝ անցման արարողություն (initiation rite), որը սոմալիական աղջկան դարձնում է «կին» և «պատվավոր անդամ» հասարակության մեջ:	ծովահենության դեմ պայքարն է, այլ ոչ երեխաների իրավունքները:
Մյանմայի Հանրապետությունում *(Ռոհինջա փոքրամասնություն)*	• Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW) – վավերացվել է 1984 թ. մայիսի 30-ին: • Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC) – վավերացվել է 1991 թ. մայիսի 1-ին: • Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICESCR) (վավերացվել է 2017 թ.)	ՄԱԿ-ի զեկույցներում Ռոհինջա էթնիկ խումբը հիմնականում ներկայացվում է որպես բռնությունների և զանգվածային հալածանքների զոհ Մյանմարի կառավարական ուժերի կողմից: Մյանմարում ռոհինջա մուսուլման երեխաների զանգվածային սպանությունները տեղի են ունեցել Մյանմարի զինված ուժերի լայնածավալ «մաքրման գործողությունների» ժամանակ, որոնք ուղեկցվել են անդնդախոր դաժանություններով, այդ թվում՝ նորածինների և անչափահասների կոտորածներով, ողջ-ողջ այրելով և հարկադիր տեղահանմամբ:[15]	Մյանմարը Չինաստանի համար ունի կենսական նշանակություն, քանի որ այն ապահովում է անմիջական ելք դեպի Հնդկական օվկիանոս: Դրա վառ օրինակն են Չինաստան-Մյանմար տնտեսական միջանցքը, նավթամուղերն ու գազամուղերը, որոնք թույլ են տալիս Պեկինին շրջանցել Մալակկայի նեղուցը և էներգակիրներ ներկրել անմիջապես Մյանմարի նավահանգիստներով: Որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ՝ Չինաստանը պարբերաբար

[15] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին ներկայացված պաշտոնական զեկույց (A/HRC/39/64). սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://surl.li/qbtary :

			օգտագործում է իր վետոյի իրավունքը կամ սպառնում է կիրառել այն՝ կանխելու համար Մյանմարի ռազմական ռեժիմի (ջունտայի) դեմ ուղղված որևէ կոշտ բանաձև
Չինաստան *(Ույղուրական փոքրամասնություն)*	Վավերացրել է • «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա (CRC) – վավերացվել է 1992 թ. մարտի 2-ին: • «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա (CEDAW) – վավերացվել է 1980 թ. նոյեմբերի 4-ին: • «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիա (CAT) – վավերացվել է 1988 թ. հոկտեմբերի 4-ին: • «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CERD) – վավերացվել է 1981 թ. դեկտեմբերի 29-ին: • Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICESCR) – վավերացվել է 2001 թ. մարտի 27-ին:	Սինցզյանում ույղուր երեխաների բռնի անջատում ընտանիքներից և պետական ճամբարներում ուծացում (ասիմիլյացիա): Չինաստանի իշխանությունները զանգվածային կալանավորումների, թվային հսկողության և բռնի ձուլման քաղաքականության են ենթարկում Սինցզյանի ույղուրական փոքրամասնությանը՝ նպատակ ունենալով արմատախիլ անել անջատողականությունը և վերահսկել ռազմավարական տարածաշրջանը:	Չինաստանի տնտեսական և քաղաքական գերիզոր ազդեցությունը, ինչը կաթվածահար է անում ՄԱԿ-ի ցանկացած սանկցիոն մեխանիզմ:

4.2. Նախադեպային ուսումնասիրություն՝ Աֆղանստանի օրինակով

Վերը նշված համակարգային աղյուսակի ամենացայտուն և ողբերգական ժամանակակից դրսևորումներից մեկն Աֆղանստանի շարունակական նախադեպն է՝ «Թալիբան»

վարչակարգի ներքո: Այստեղ, երբ կրոնական իրավունքը (Շարիաթը[16]) դադարել է լինել անձնական հոգևոր կողմնորոշիչ և վերածվել է պետական-քաղաքական տոտալիտար գործիքի, վարչակարգը բացահայտորեն անտեսում է (*jus cogens) միջազգային համընդհանուր պարտադիր նորմերի* սահմանագծերը: «Իսլամական և ազգային արժեքների» քողի տակ արդարացվող բռնություններն ու ճնշումները հաջորդաբար ոչնչացնում են մարդու իրավունքների բոլոր երեք սերունդները՝ սկսելով անհատական քաղաքացիական ու քաղաքական ազատություններից, շարունակելով սոցիալ-տնտեսական ու մշակութային երաշխիքներով և ավարտելով համայնքային ու հավաքական զարգացման իրավունքներով: Մասնավորապես՝

Ա. I Սերունդ. Կյանքի, առողջության իրավունքի և խոշտանգումների արգելքի խախտումներ

Այս մակարդակում ռեժիմն ուղղակիորեն ոտնահարում է միջազգային իրավունքի բացարձակ նորմերը՝ ֆիզիկական բռնությունը վերածելով պետականորեն խրախուսվող ինստիտուտի:

- **Լեգիտիմացված խոշտանգումներ և ֆիզիկական պատիժներ.** Ռեժիմի «Առաքինության խթանման և արատների կանխարգելման» օրենսդրական ակտերով[17] ոստիկանությանը պաշտոնական իրավունք է տրված կանանց ենթարկել ֆիզիկական պատիժների, այդ թվում՝ հանրային մտրակահարության (ընդհուպ՝ 50 մտրակի հարված) և քարկոծման՝ «չընդունված» հագուստ կրելու, առանց տղամարդ ուղեկցորդի տնից դուրս գալու կամ հանրային վայրում ձայնը բարձրացնելու համար: Սա խոշտանգման ուղղակի դրսևորում է, որը հիմնավորվում է կրոնական նորմով:

[16] Շարիաթը (արաբերեն՝ شريعة - «ուղի, ճանապարհ») իսլամական կրոնահիրավական համակարգ է, որը սահմանում է մուսուլմանների կյանքի բոլոր ոլորտները՝ կրոնական պաշտամունքը, բարոյական նորմերը, ընտանեկան հարաբերությունները, սոցիալական կյանքն ու դատական համակարգը: Այն հիմնված է չորս հիմնական աղբյուրների վրա. Ղուրան, Սուննա, Իջմա, Կիյաս:
(Ընդհանուր բացատրություն իսլամական իրավունքի, պատմության և կիրառման վերաբերյալ) սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://tinyurl.com/3ysda5fk :

[17] Անգլերեն թարգմանությունը սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://tinyurl.com/yckaec86 :

- **Կյանքի և անձնական անձեռնմխելիության զրկում.** Բացահայտորեն վերականգնվել է դատական կարգով իրականացվող քարկոծումը (*stoning*) մինչև մահ՝ ամուսնական անհավատարմության կամ ռեժիմի սահմանած բարոյական նորմերը խախտելու համար, ինչը կյանքի բնական իրավունքի խախտման սարսափելի դրսևորում է:
- **Տեղաշարժի և խոսքի ազատության բացարձակ սահմանափակում.** Կանանց արգելված է տեղաշարժվել առանց «մանրամի» (ամուսնու կամ արյունակից տղամարդու) և խոսել հանրային վայրերում այնպես, որ իրենց ձայնը լսելի լինի անծանոթներին, ինչն անձնական ազատության ամբողջական սահմանափակում է:

Բ. II Սերունդ. Տնտեսական, սոցիալական և կրթական իրավունքների կազմաքանդում

- **Կրթության իրավունքի իսպառ արգելում.** Աղջիկներին պաշտոնապես արգելված է 6-րդ դասարանից հետո հաճախել դպրոց և ստանալ բարձրագույն կրթություն: Ռեժիմն այս մշակութային ռելյատիվիզմը հիմնավորում է նրանով, որ կրթական համակարգը պետք է «մաքրվի արևմտյան ազդեցությունից»: Իրականում սա զրկում է անհատին իր մտավոր ու հոգևոր ներուժի զարգացման բնական հնարավորությունից:
- **Աշխատանքի և տնտեսական ինքնուրույնության արգելք.** Կանանց արգելված է աշխատել պետական, հասարակական և բիզնես ոլորտներում: Կանանց աշխատելու և տնտեսական ինքնուրույնության իրավունքից զրկելով՝ ռեժիմը նրանց դատապարտում է բացարձակ կախվածության ու խոցելիության՝ գործնականում նրանց վերածելով տղամարդու «սեփականության»:
- **Առողջապահության իրավունքի սահմանափակում.** Քանի որ կանանց արգելված է դիմել տղամարդ բժիշկների, իսկ կին բժիշկների պատրաստումը կրթական արգելքի պատճառով դադարեցված է, կանայք զրկվում են տարրական բժշկական օգնությունից, ինչն ուղղակիորեն սպառնում է նրանց կյանքին և առողջությանը:

Գ. III Սերունդ. Կոլեկտիվ և մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի խախտումներ

- **Մշակութային և սոցիալական կյանքից լիակատար մեկուսացում**- Կանանց արգելված է այցելել զբոսայգիներ, մարզասրահներ, կինոթատրոններ և հանրային սոցիալականացման ցանկացած վայր:
- **Համայնքային զարգացման և համերաշխության իրավունքի ժխտում**- Ռեժիմը հրաժարվում է կայուն զարգացման միջազգային սկզբունքներից՝ հասարակության կեսին ուժով դուրս մղելով հանրային կյանքից, ինչը խախտում է ժողովուրդների համատեղ առաջընթացի և սոցիալական համերաշխության կոլեկտիվ իրավունքը:

Աֆղանստանի նախադեպն ապացուցում է, որ Վիեննայի կոնվենցիայի «պատրվակի բացառման» տեսական պատնեշը գործնականում փլուզվել է, ինչը պահանջում է նոր իրավական գործիքակազմի և մոդելների ներդրում:

<u>Գիտական նորույթ 1. «Հարաբերականության շերտայնության մոդելը»</u>

Վիեննայի կոնվենցիայի ճգնաժամը հաղթահարելու և ունիվերսալիզմի ու ռելյատիվիզմի բախումը կիրառական հարթություն տեղափոխելու համար առաջարկվում է հեղինակային **«Հարաբերականության շերտայնության մոդելը»**: Այս մոդելը տարանջատում է մարդու իրավունքների համակարգը երեք հաջորդական շերտերի՝ ըստ մշակութային «ներկման կամ կլանման» թույլատրելիության աստիճանի և պետության սահմանադրական ու միջազգային պարտավորությունների համատեքստի.

ՇԵՐՏ 3 Մշակութային ճկունության գոտի (III սերունդ) (Օրինակ՝ հավաքական և համերաշխության իրավունքներ՝ զարգացում, խաղաղություն, առողջ շրջակա միջավայր)
⬇
ՇԵՐՏ 2 Հարաբերական սահմանափակումների գոտի (I I սերունդ) (Օրինակ՝ Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքներ՝ աշխատանքի, կրթության, բարեկեցության և մշակութային զարգացման երաշխիքներ)
⬇

ՇԵՐՏ 1 Բացարձակ ունիվերսալ կորիզ (Jus Cogens և I սերունդ) (անձեռնմխելի՝ ստրկության արգելք, կյանքի, արժանապատվության, խոշտանգումների և կամայական բռնության բացառման անվերապահ երաշխիքներ)

Մոդելի շերտերի մանրամասն վերլուծությունը

Շերտի անվանումը	**Իրավական բովանդակությունը**	**Մշակութային թույլատրելիությունը**	**Սահմանադրական և միջազգային կարգավիճակը**
Շերտ 1: Բացարձակ ունիվերսալ կորիզ	Կյանքի իրավունք, խոշտանգումների և ստրկության արգելք, կամայական ձերբակալությունների արգելք:	0% (Լիակատար անձեռնմխելիություն): Որևէ մշակույթ կամ կրոն չի կարող փոփոխել այս իրավունքների բովանդակությունը:	*Jus Cogens* նորմեր, միջազգային սովորութային իրավունք, Սահմանադրության չփոփոխվող դրույթներ:
Շերտ 2: Հարաբերական սահմանափակումների գոտի	Խոսքի ազատություն, կրթության իրավունքի, հավաքների ազատություն, կրոնի ազատության արտաքին դրսևորումներ (*forum externum*):	Սահմանափակ ճկունություն. մշակույթը և բարոյականությունը կարող են հիմք լինել սահմանափակման համար, եթե դա իրավաչափ է և համաչափ	Սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունք, ՄԻԵԴ իրավասություն:
Շերտ 3: Մշակութային ճկունության գոտի	Հավաքական կամ համերաշխության իրավունքներIII սերունդ). Մարդկության ընդհանուր ժառանգության (համաշխարհային մշակութային և	Բարձր ճկունություն. Ազգային առանձնահատկությունները կարող են ազդել իրացման ձևի վրա՝ պայմանով, որ չխախտվի իրավունքի էությունը	Սահմանադրական նպատակներ, պետության սոցիալ-տնտեսական պարտավորություններ:

	բնական արժեքների) պաշտպանության իրավունքներ:		

Սույն մոդելը հստակ ցույց է տալիս, որ որքան մոտենում ենք մարդու իրավունքների «Ունիվերսալ կորիզին» (Շերտ 1), այնքան մշակութային ռելյատիվիզմի ազդեցությունը հավասարվում է զրոյի:

2. Գիտական նորույթ և առաջարկներ. Իրավական գործիքակազմի կատարելագործում

Քանի որ ներքին իրավազրկումները քողարկելու համար ավտորիտար ռեժիմները հաճախ սուվերենության սկզբունքը վերածում են «շղարշի», անհրաժեշտ է միջազգային իրավունքում ներդնել նոր դոկտրինալ առաջարկներ.

Ա. Մարդու իրավունքների երեք սերունդների խախտման սինթեզը՝ որպես միջազգային սանկցիաների պարտադիր հիմք

Առաջարկվում է ներդնել օբյեկտիվ իրավական բանաձև, ըստ որի՝ մարդու իրավունքների երեք սերունդների միաժամանակյա և համակարգային խախտման փաստը պետք է ճանաչվի որպես պետության դեմ պարտադիր միջազգային պատժամիջոցների (սանկցիաների) կիրառման հիմք.

Իրավական բանաձևը. Եթե պետությունը ոչ միայն խախտում է բնական իրավունքները (I սերունդ), այլև մշակույթի պատրվակով սիստեմատիկորեն արգելում է կրթությունն ու աշխատանքը (II սերունդ) և անհատին լիովին մեկուսացնում հանրային-մշակութային կյանքից (III սերունդ), ապա տեղի է ունենում ոչ թե «ավանդույթի կլանում», այլ մարդու իրավական սուբյեկտայնության լիակատար ոչնչացում:

Այս համակցված խախտումը պետք է ավտոմատ կերպով որակվի որպես սպառնալիք միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը (ՄԱԿ-ի Կանոնադրության 7-րդ գլխի[18] իմաստով)՝ հանգեցնելով պարտադիր տնտեսական, ֆինանսական և դիվանագիտական մեկուսացման:

[18] սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով ՝ https://tinyurl.com/2saht4fc:

Բ. «Իրավունքի ընտրության անհատական հայեցողություն» (Մետաիրավական նորույթ)

Առաջարկվում է ինստիտուցիոնալացնել «անհատի կողմից իրավունքի կամ ավանդույթի ընտրության» թեզը, որի էությունը հանգում է հետևյալ իրավական սահմանազատմանը.

- **Չափահաս անձանց մասով (Ինքնորոշման իրավունք).** II և III սերնդի իրավունքների կիրառման մասով չափահաս անձին պետք է տրվի ինքնուրույն ընտրության իրավունք: Անձն ինքը պետք է որոշի՝ իրացնել իր կրթության և աշխատանքի ունիվերսալ իրավունքը, թե՞ սեփական կամքով հրաժարվել դրանից և մնալ պահպանողական-ավանդական արժեքների կրող:
- **Երեխաների մասով (Բացարձակ արգելք).** Երեխաների նկատմամբ (առանց սեռային տարբերության) որևէ ավանդական կամ կրոնական հիմնավորմամբ բնական իրավունքների սահմանափակումը պետք է ընդհանրապես բացառվի և քրեականացվի: Երեխան չունի իրավական գիտակցության այն մակարդակը, որպեսզի հրաժարվի իր կրթության կամ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքից:

<u>Դոկտրինալ վերլուծություն և գիտական ամփոփում</u>

Ունիվերսալիզմի և մշակութային ռելյատիվիզմի բախման համապարփակ իրավական վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից միջազգային իրավունքը կանգնած է ինստիտուցիոնալ և հայեցակարգային փակուղու առջև: Ունիվերսալիզմը, հենվելով բնական իրավունքի աքսիոմների վրա, արդարացիորեն պահանջում է անձի պաշտպանության բացարձակ նշաձող, սակայն բախվում է պոզիտիվիստական իրավակիրառության անզորությանը, երբ տվյալ պետությունը հրաժարվում է կատարել իր պարտավորությունները ներքին սովորույթների հիմնավորմամբ: Մյուս կողմից՝ մշակութային ռելյատիվիզմը, որն ի սկզբանե հանդես էր գալիս որպես անթրոպոլոգիական բազմազանության պաշտպանության գործիք, վերածվել է տոտալիտար վարչակարգերի իրավական «վահանի»:

Սույն հոդվածում ներկայացված սահմանազատման աղյուսակը և Աֆղանստանի, Եմենի, Սոմալիի, Մյանմարի ու Չինաստանի դեպքերը ցույց են տալիս, որ «արհեստական

կուրությունը» միջազգային հանրությունում այլևս տեսական թերություն չէ, այլ գործնականում համակարգային ճգնաժամ: Օրինակ՝ երբ պետությունները պաշտոնապես ստորագրում են Երեխայի իրավունքների կոնվենցիան (CRC), բայց «ավանդույթի» անվան տակ օրինականացնում են գենդերային ապարտեիդը կամ սեռական անդամահատումը, ապա Մարդու իրավունքների միջազգային բիլլի իրավական ուժը դառնում է պատրանքային:

Ժամանակակից միջազգային իրավունքի և փիլիսոփայության առջև ծառացած առանցքային մարտահրավերն ու հիմնարար դոկտրինան պահանջում են միավորել մարդու իրավունքների սերնդային էվոլյուցիան և բարձրագույն ստիպողական նորմերի անբաժանելի համակարգը՝ բացառելով ցանկացած երկակի ստանդարտ, որի համատեքստում անհրաժեշտ է հստակ տարբերակել առաջին սերնդի բացարձակ ու անձեռնմխելի հիմքերը՝ կյանքի, արժանապատվության և խոշտանգումների բացառման *jus cogens* նորմերը, որոնք կազմում են միջազգային անվտանգության անխախտ կորիզը, երկրորդ սերնդի սոցիալ-տնտեսական ու մշակութային երաշխիքները և երրորդ սերնդի հավաքական ու համերաշխության իրավունքները: Սույն համակարգում առանցքային տեղ է զբաղեցնում սուբյեկտիվ իրավունքներից այն կողմ գտնվող գերիրավական հարթությունը՝ «իրավունքի ընտրության անհատական հայեցողությունը» որպես մետաիրավական նորույթ, որը ինքնադրսևորման և գնահատման բարձրագույն մակարդակ է, սակայն այս համընդհանուր ունիվերսալիզմը հաճախ բախվում է տեղական մշակութային ու կրոնական դոգմաների արհեստական սահմանափակումների հետ, երբ պետություններն արդարացնում են մարդու իրավունքների զանգվածային խախտումները՝ հղում անելով «ազգային ադաթներին» կամ «շարիաթի կանոններին»: Ինչպես արդեն հանգամանալից ներկայացվեց Աֆղանստանի արդի իրավիճակը, այս խեղաթյուրման առավել վառ ապացույցն է այն փաստը, որ նույնիսկ Շարիաթի հիմքերը վկայակոչելով՝ իսլամական կանանց ու երեխաների իրավունքները խախտելիս անտեսվում է պատմական իրողությունը, որ Իջմայի՝ տղամարդ իրավաբան գիտնականների կողմից հօգուտ բռնակալության թարգմանված ու ձևափոխված մեկնաբանություններից անդին, հենց Շարիաթի և Սուննայի արմատներում կանգնած Մուհամմեդ մարգարեի կինը՝ Խադիջան,

ինքնին եղել է անկախ, խոշոր տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավունքներով ու լայն սուբյեկտայնությամբ օժտված կին, ինչը ցույց է տալիս, որ ներկայիս արգելքները բացարձակ նոնսենս են: Հետևաբար, միջազգային հասարակությունը պետք է որդեգրի անզիջում քաղաքականություն, ըստ որի՝ անկախ այն հանգամանքից, թե մարդը ծնվել է ճանաչված կամ չճանաչված պետությունում, իսլամական թե քրիստոնեական հասարակությունում, միևնույն է, պետք է կիրառվի միասնական մոտեցում, քանի որ մարդու իրավունքների պաշտպանությունը չի կարող կախված լինել ազգային պատկանելությունից կամ կեղծ ռելյատիվիստական արդարացումներից, և այս տրամաբանությամբ, հիմնվելով ՄԱԿ-ի Կանոնադրության VII գլխի մեխանիզմների վրա՝ միջազգային հանրությունը պետք է խիստ և կոպտագույն սանկցիաներ կիրառի համանման բոլոր խախտող պետությունների կամ չճանաչված կազմավորումների նկատմամբ, ուստի, քանի դեռ *jus cogens* նորմերը զիջում են տեղական մշակութային կամ կրոնական շահերին, միջազգային իրավական համակարգը չի կարող հավակնել լինելու արդարության համընդհանուր և անխուսափելի հարթություն:

Այսպիսով՝ գիտական սինթեզը պահանջում է հրաժարվել դեկլարատիվ ունիվերսալիզմից (որը միայն հռչակում է իրավունքներ, բայց չունի հարկադրանքի իրական գործիքներ) և անցում կատարել *միափեսակ ունիվերսալիզմի,* ինչը մարմնավորված է սույն հետազոտության «Հարաբերականության շերտայնության մոդելում»:

<u>Եզրակացություններ</u>

1. **Վիեննայի կոնսենսուսի փլուզումը.** 1993 թ. Վիեննայի հռչակագրի 5-րդ հոդվածով սահմանված հավասարակշռությունը (որը թույլ էր տալիս հաշվի առնել յուրահատկությունները, բայց արգելում էր նվազեցնել նշածողը) գործնականում չի աշխատում, քանի որ միջազգային իրավունքում բացակայում է «յուրահատկության իրավաչափության» հստակ սահմանագծումը:
2. **Մշակույթը որպես քաղաքական pretext.** Մշակութային ռելյատիվիզմն այլևս հասարակական ինքնության պահպանման միջոց չէ. այն ավտորիտար էլիտաների կողմից իրավական սուբյեկտայնության կազմաքանդման և ներքին բռնությունները միջազգային վերահսկողությունից դուրս թողնելու քաղաքական գործիք է:

3. **Իրավունքների անբաժանելիության կեղծ փոխարինում.** Զարգացող պետությունների կողմից II սերնդի իրավունքների (տնտեսական զարգացում) գերակայության հռչակումը I սերնդի (ազատություններ) նկատմամբ իրավաբանորեն անհիմն է: Ինչպես ցույց տվեց Աֆղանստանի նախադեպը, կրթության և աշխատանքի (II սերունդ) արգելումը հանգեցնում է անձի ֆիզիկական ու կյանքի իրավունքի (I սերունդ) ոչնչացմանը:
4. **Շերտայնության անհրաժեշտություն.** Մարդու իրավունքների պաշտպանությունը 21-րդ դարում հնարավոր է միայն այն դեպքում, եթե միջազգային իրավունքը կոշտ իրավաբանական սահմանագծով բաժանի *Jus Cogens* նորմերը (Շերտ 1) մշակութային ճկունություն ունեցող սոցիալ-տնտեսական մոդելներից (Շերտ 3):

<u>Դոկտրինալ և գիտական առաջարկների ամփոփում</u>

Ա. ՄԱԿ-ի Կանոնադրության 7-րդ գլխի իրավական ընդլայնում

Առաջարկվում է միջազգային իրավունքի դոկտրինայում ներդնել և շրջանառել «**Համակարգային իրավազրկման սինդրոմ**» (Systemic Deprivation Syndrome) հասկացությունը:

Դոկտրինալ նորույթ. Երբ պետությունը միաժամանակ և համակարգված կերպով խախտում է մարդու իրավունքների բոլոր երեք սերունդները (I սերունդ՝ ֆիզիկական պատիժներ/խոշտանգումներ, II սերունդ՝ կրթության/աշխատանքի բացարձակ արգելք, III սերունդ՝ հանրային-մշակութային կյանքից լիակատար մեկուսացում), ապա սուվերենության սկզբունքը (*Article 2(7) of the UN Charter*) կորցնում է իր իրավական պաշտպանական ուժը:

Այս համակցված հիմքը պետք է ավտոմատ կերպով ճանաչվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից որպես «սպառնալիք միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը»՝ պարտադիր տնտեսական և դիվանագիտական մեկուսացման (սանկցիաների) կիրառմամբ, շրջանցելով քաղաքական երկակի ստանդարտները:

Բ. Մետաիրավական սկզբունք. «Իրավունքի ընտրության անհատական հայեցողություն»

Առաջարկվում է միջազգային կոնվենցիոնալ իրավունքում ներդնել նոր սկզբունք, որը կկոչվի **«Անհատի գերակայությունը սովորույթի նկատմամբ»**:

- **Չափահաս անձանց իրավական ֆիլտրը.** Պետությունը չի կարող օրենքով արգելել II և III սերնդի իրավունքների իրացումը: Անձին (հատկապես ավանդական հասարակություններում կանանց) պետք է երաշխավորվի անհատական ընտրության իրավունք. եթե անձը ցանկանում է ստանալ աշխարհիկ կրթություն և աշխատել, պետությունը պարտավոր է ապահովել դա՝ անկախ տեղական կրոնական էլիտաների դիրքորոշման: Ավանդույթին հետևելը պետք է լինի բացառապես *կամավոր*, այլ ոչ թե *հարկադիր*:
- **Երեխաների իրավական անձեռնմխելիության բացարձակ ռեժիմ.** Երեխաների նկատմամբ (մինչև 18 տարեկան) որևէ մշակութային կամ կրոնական ավանդույթ (մանկահասակների ամուսնություն, CRC նորմերի կասեցում, սեռական անդամահատում) չի կարող ունենալ իրավական ուժ: Նման պրակտիկաներ իրականացնող պետությունների նկատմամբ պետք է գործարկվի ունիվերսալ յուրիսդիկցիայի քրեական մեխանիզմը:

Գ. Միջազգային պայմանագրերի վերապահումների ինստիտուտի ռեֆորմ

Առաջարկվում է փոփոխել Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թ. կոնվենցիայի կիրառման պրակտիկան մարդու իրավունքների պայմանագրերի մասով:

Առաջարկ. Բացարձակապես անվավեր (*void ab initio*) ճանաչել պետությունների այնպիսի վերապահումները մարդու իրավունքների կոնվենցիաներին, որոնք ունեն գլոբալ/անորոշ բնույթ (օրինակ՝ «սույն կոնվենցիան կիրառվում է այնքանով, որքանով չի հակասում ազգային կամ կրոնական օրենսդրությանը»): Վերապահումը կարող է լինել միայն կոնկրետ, ընթացակարգային և երբեք չի կարող առնչվել հոդվածների իրավական էությանը:

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ УНИВЕРСАЛИЗМА ПРАВ ЧЕЛОВЕКА И КУЛЬТУРНОГО РЕЛЯТИВИЗМА

КАРАПЕТЯН ЛАУРА
Соискатель Института философии,
социологии и права НАН РА

Аннотация. В данной статье анализируется неразрывная связь эволюции прав человека в современной доктрине международного права, начиная с принятия Всеобщей декларации прав человека (ВДПЧ) 1948 года, с важнейшей проблемой: обладают ли эти права универсальной применимостью или их содержание должно быть приведено в соответствие с местным культурным контекстом? Автор подчеркивает, что, хотя Международный билль о правах человека создал универсальную систему обязательных норм, государства с различными культурными, религиозными и экономическими традициями исторически проявляли и продолжают проявлять сопротивление их неизменному применению. Целью работы является анализ доктринального столкновения универсализма и релятивизма в современной глобальной правовой системе и предложение «Модели слоистости относительности» в качестве инструментария для правового преодоления актуальной проблемы.

Ключевые слова: Доктрина естественного права, культурный релятивизм, доктринальный синтез, правоприменительная практика, декларация, Международный билль, концептуальная рамка, тезис о приоритете, прецедентное исследование.

CONTEMPORARY ISSUES OF HUMAN RIGHTS UNIVERSALISM AND CULTURAL RELATIVISM

KARAPETYAN LAURA

Applicant at the Institute of Philosophy, Sociology and Law,
National Academy of Sciences of the Republic of Armenia

Abstract. This article analyzes the way the evolution of human rights in modern international legal doctrine, starting from the adoption of the Universal Declaration of Human Rights (UDHR) in 1948, is inextricably linked to a major problem: whether these rights have universal applicability, or their content should be adapted to local cultural contexts. The author emphasizes that although the International Bill of Human Rights has created a universal system of binding norms, some States with diverse cultural, religious, and economic traditions have historically shown and continue to show resistance to their invariable application.

The aim of this study is to analyze the doctrinal incongruence of universalism and relativism in contemporary international legal order and to propose the "Relativity Stratification Model" as a tool for legally addressing this issue.

Key words: doctrine of natural law, cultural relativism, doctrinal synthesis, law application practice, declaration, International Bill, conceptual framework, priority thesis, case study.

Օգտագործված գրականության ցանկ

Միջազգային իրավական ակտեր և փաստաթղթեր՝

1. **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր** (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 217 A (III) բանաձևով, 10 դեկտեմբերի 1948թ.):
2. **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր** (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2200A (XXI) բանաձև, 16 դեկտեմբերի 1966թ.):
3. **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր** (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2200A (XXI) բանաձև, 16 դեկտեմբերի 1966թ.):
4. **Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա** (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 44/25 բանաձև, 20 նոյեմբերի 1989թ.):
5. **Վիեննայի հռչակագիր և գործողությունների ծրագիր** (Մարդու իրավունքների համաշխարհային համաժողով, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/CONF.157/23, 25 հունիսի 1993թ.):
6. **Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա** (23 մայիսի 1969թ.):
7. **Իսլամական մարդու իրավունքների Կահիրեի հռչակագիր** (Իսլամական կոնֆերանս կազմակերպության 19-րդ արտաքին գործերի նախարարների համաժողով, 5 օգոստոսի 1990թ.):
8. **Բանգկոկի հռչակագիր** (Մարդու իրավունքների ասիական պետությունների տարածաշրջանային հանդիպման զեկույց, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/CONF.157/ASRM/8, 7 ապրիլի 1993թ.):
9. **ՄԱԿ-ի Կանոնադրություն** (սատագրված 1945 թ. հունիսի 26-ին, Սան Ֆրանցիսկոյում) — *մասնավորապես 7-րդ գլխի (միջազգային սանկցիաներ) և 2-րդ հոդվածի 7-րդ կետի (պետությունների ներքին իրավասության/սուվերենության շղարշի) վերլուծության համար:*
10. **Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW)** (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1979 թ.) — *Աֆղանստանում, Եմենում և այլ տարածաշրջաններում գենդերային ապարտեիդի ու կանանց իրավունքների համակարգային խախտումների իրավական որակման համար:*

II. Միջազգային կազմակերպությունների զեկույցներ և Case-Study նյութեր

11. UN Անվտանգության Խորհրդի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի (OHCHR) հատուկ զեկույցները Աֆղանստանում տիրող իրավիճակի վերաբերյալ (2021–2026 թթ. զեկույցներ՝ գենդերային ապարտեիդի և «Առաքինության տարածման ու արատների կանխարգելման» օրենսդրության վերաբերյալ):

12. Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) և UNICEF-ի համատեղ զեկույցները Սոմալիում կանանց սեռական անդամահատումների (FGM) և Եմենում մանկահասակների հարկադիր ամուսնությունների վիճակագրության վերաբերյալ:

13. Միջազգային դատարանի (ICJ) խորհրդատվական կարծիքներն ու վճիռները *jus cogens* նորմերի բացարձակության և էրգա օմնես (*erga omnes*) պարտավորությունների վերաբերյալ:

III. Իրավաբանական դոկտրինա և գիտական գրականություն

14. Donnelly, Jack. *Universal Human Rights in Theory and Practice* (3rd ed., Cornell University Press, 2013) – *Ունիվերսալիզմի և հարաբերականության տեսական հիմքերի վերլուծության համար:*

15. An-Na'im, Abdullahi Ahmed. *Human Rights in Cross-Cultural Perspectives: A Quest for Consensus* (University of Pennsylvania Press, 1992) – *Իսլամական իրավակարգի և մշակութային դիսկուրսի սինթեզի համար:*

16. Steiner, Henry J., Alston, Philip, & Goodman, Ryan. *International Human Rights in Context: Law, Politics, Morals* (Oxford University Press, 2008) – *Մարդու իրավունքների երեք սերունդների փոխկախվածության վերլուծության համար:*
17. Franck, Thomas M. *The Empowered Self: Law and Society in the Age of Individualism* (Oxford University Press, 1999) – *Անհատի ինքնորոշման և սովորույթի նկատմամբ գերակայության հայեցակարգի համար:*